


ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ  
ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՄԱՅԻ

1. Թեմայի վերնագիրը. «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի ( Շիրակ, Լոռի, Տավուշ ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը»
2. Ծածկագիրը. 01-SCI-2017
3. Թեմայի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր. № ShSU 01-SCI-2017, «01» մարտի 2017 թ.
4. Հաշվետու ժամանակահատվածը. «01» մարտի 2017 թ.-ից «30» մայիսի 2017 թ.
5. Կազմակերպության անվանումը, որտեղ իրականացվում է թեման. Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան
6. Թեմայի ղեկավարի  
ազգանունը, անունը, հայրանունը. Մարտիրոսյան Լ. Մ.  
հեռախոսը. 055 77 03 99  
Էլեկտրոնային փոստի հասցեն. mlevon2003@mail.ru
7. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները. 900 000 ՀՀ դրամ
8. Թեմայի ղեկավարի ստորագրությունը.   
«31» մայիսի 2017 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Շիրակի պետական համալսարանի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնում իրականացվող «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի ( Շիրակ, Լոռի, Տավուշ ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» գիտահետազոտական թեմայի աշխատանքները սկսվել են 2017թ. մարտի 1-ից:

Գիտահետազոտական աշխատանքի առաջին փուլում, աշխատանքային խմբի կողմից կատարվել է գրականության վերլուծություն: Հիմնականում կատարվել է մորֆոմետրիական ցուցանիշների և ռեկրեացիայի վերաբերյալ գրականության ուսումնասիրություն:

Գրականության վերլուծությունը կարևոր է, քանի որ այն հանդիսանում է ցանկացած գիտական հետազոտության հիմնավորվածության, ինչպես նաև արդիականությունը հավաստող կարևոր գործոտություն: Գրականության որակյալ վերլուծությունը թույլ է տալիս ընթերցողին առանց մեծ դժվարության հասկանալ հետազոտության և նրա արդյունքների էությունը:

Գրականության վերլուծության ժամանակ առավել մեծ ուշադրություն է դարձվել այնպիսի սկզբնաղբյուրների, որոնց մեջ ներկայացված է եղել հետազոտության թեմայի համար առավել կարևոր նյութերը: Գրականության վերլուծության արդյունքում ստեղծվել է էլեկտրոնային քարտադարան, որը կարող է օգտագործվել նաև սույն թեմայի ավարտից հետո:

Հետազոտվող տարածքի բարձրաչափական գոտիների ռեկրեացիոն գնահատման համար կարևոր նշանակություն է ստանում հիպսոմետրիկ գոտիների խոշորամասշտաբ քարտեզի կազմումը, որը եղել է աշխատանքների իրականացման առաջին փուլի գլխավոր խնդիրը: Նկատի ունենալով տարածքի մեծությունը, ինչպես նաև հետազոտման բնույթը և մանրամասնությունը, մեր կողմից նպատակահարմար է համարվել 1:100 000 մասշտաբի քարտեզի կազմումը: Վերջինս հանդիսանում է ձևաչափական մյուս ցուցանիշների՝ լանջերի թեքությունների ու դիրքադրությունների, մասնատման խորության ու խտության, հաշվարկման կարևորագույն հիմքը: Այն ենթադրում է տեղանքի ռելիեֆի թվային մոդելի կազմում ժամանակակից ԱՏՀ տեխնոլոգիաների կիրառմամբ: Աշխատանքների հիմնական մասը իրագործվել է ArcGIS



10.2 ծրագրային միջավայրում: Ռելիեֆի թվային մոդելի կազմման համար որպես փաստացի նյութ ծառայել են ժամանակակից արբանյակային հանույթի տվյալները՝ մասնավորապես **SRTM90** համակարգը, որի տրամադրած տվյալների մանրամասնությունը համապատասխանում է 1:100 000 մասշտաբի տեղագրական քարտեզի ռելիեֆի մանրամասնություններին:

Քարտեզագրական աշխատանքների երկրորդ փուլում, հետազոտվող տարածքի տեղանքը բաժանվել է առանձին բարձունքային միջակայքերի: Ելնելով աշխատանքի մեթոդաբանական պահանջներից և հետազոտվող տարածքի ռելիեֆային առանձնահատկություններից՝ առանձնացվել են բարձունքային թվով 7 միջակայք՝ 500 մ բարձրության քայլով՝ մինչև 500 մ, 500-1000 մ, 1000-1500 մ, 1500-2000 մ, 2000-2500 մ, 2500-3000 մ, 3000 մ և ավելի: Ռելիեֆի բարձրաչափական գոտիների նման միջակայքեր նախկինում գրեթե չեն առանձնացվել: Վերջինս կատարված աշխատանքների գլխավոր նորույթներից մեկն է: Հաշվարկային մասը իրականացվել է ատրիբուտների աղյուսակում՝ **Calculate Field** բաժնում: Արդյունքում ստացված տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Հետազոտման համար կարևոր հանգամանք է հանդիսացել նաև ռելիեֆային ռեսուրսների գնահատումն ըստ բարձրաչափական գոտիների: Գնահատման սանդղակի կազմման ժամանակ մեր կողմից հիմք է ընդունվել քառաստիճան համակարգ՝ 0-ից մինչև 3 բալ: 0 բալ տրվել է այն դեպքում, երբ տվյալ տեսակի ռելիեֆային համար պայմանները բացակայել են: Բացի բալային գնահատումից տրվել են նաև որակական գնահատականներ: 1 բալի դեպքում ռելիեֆային հնարավորությունները գնահատվել են ցածր, 2 բալի դեպքում միջին, իսկ 3 բալի ժամանակ՝ բարձր: Բալերի հանրագումարի հիման վրա, գոտիների գնահատման համար առանձնացվել են թվով չորս կատեգորիաներ, ինչը արտահայտված է նաև հետազոտության արդյունքները ամփոփող 1:100 000 մասշտաբի քարտեզի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. **Авакян А.А., Аракелян А.А., Бойнагрян В.Р., Ерицян Г.Г.** Состояние, задачи и приложения морфометрических исследований рельефа Армении //Материалы XXXIII Пленума Геоморфологической комиссии РАН, Саратов, 2013, с. 532-536,
2. **Багдасарян А.Б.** Климат Армянской ССР. Изд. АН ССР, Е. 1958, с. 150
3. **Балян С.П.** Структурная геоморфология Армянского нагорья и окоймляющих областей – Ереван: Изд. ЕГУ, 1969, 390 с.,
4. **Балян С.П.** Морфологический анализ строения Армянского нагорья //Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1965, N3-4, с. 75-94.
5. **Бредихин А.В.** Рельеф как условие и ресурс рекреационной деятельности. Вестн. МГУ, сер. 5, география, 2003, №1, с. 58-59.
6. **Геворгян Ф.С.** Морфометрия речных бассейнов и режим поверхностного стока на примере бассейна р. Арпа // Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1969, N3, с. 50-58,
7. **Геворгян Ф.С.** Морфометрический анализ в бассейне р. Гетик с целью выявления неотектонических движений и морфоструктур // Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1969, N4, с. 98-99,
8. **Геворгян Ф.С., Меликсетян Р.В.** Опыт составления орографических карт (на примере Армянской ССР) //Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1967, N4-5, с.
9. **Геворгян Ф.С., Погосян Д.А.** О некоторых результатах морфометрического картирования территории Армянской ССР //Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1970, N4, с. 16-24,
10. **Зограбян Л.Н.** Связь орографической расчлененности гор с морфоструктурой// Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1972, N5, с. 82-90,
11. **Зограбян Л.Н.** О геоморфологических исследованиях в Армянской ССР //Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1976, N2, с. 50-55,
12. **Зограбян Л.Н., Геворгян Ф.С.** Морфологический анализ морфоструктуры Кавказа //Изв. АН Арм. ССР, Науки о Земле, 1971, N5, с. 67-74,
13. **Симонов Ю.Г.** Геоморфология: Методология фундаментальных исследований. – СПб: Питер, 2005, 427 с.,
14. **Симонов Ю.Г.** Морфометрический анализ рельефа. – Смоленск: Изд. СмолГУ, 1998, 272 с.,
15. **Симонов Ю.Г.** Объяснительная морфометрия рельефа. – М.: ГЗОС, 1999, 263 с.,
16. **Симонов Ю.Г.** Методы геоморфологических исследований. – М.: Аспект Пресс, 2002, 191 с.,
17. **Философов В.П.** Краткое руководство по морфометрическому методу поисков тектонических структур. - Саратов: Изд. Саратовского ун.-та, 1961, 95 с.,
18. **Философов В.П.** Основы морфометрического метода поисков тектонических структур. - Саратов: Изд. Саратовского ун.-та, 1975, 232 с.
19. **Егорина А.В., Логиновская А.Н.** Рельеф как фактор рекреационной деятельности (на примере Восточного Казахстана). Барнаул, 2013г., с. 47-50.



20. Исламова А.Г., Джапарова Н.С. Анализ туристско-рекреационных ресурсов южной части Иссыккульской котловины с использованием ГИС-программ. География и туризм. 2010г. с.28-33
21. ЕДИНАЯ СПОРТИВНАЯ КЛАССИФИКАЦИЯ ТУРИСТСКИХ МАРШРУТОВ (ЕСКТМ) (КАТЕГОРИРОВАНИЕ ТУРИСТСКОГО МАРШУТА И ЕГО ОПРЕДЕЛЯЮЩИХ ПРЕПЯТСТВИЙ (ФАКТОРОВ)). Спортивный туризм, 2016.
22. МЕТОДИКА КАТЕГОРИРОВАНИЯ ВЕЛОСИПЕДНЫХ МАРШРУТОВ (МКВМ). 2014.
23. Павлова А. И. Морфометрический анализ рельефа с помощью ГИС. Новосибирск, 2013г.
24. Погосян Д.А. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Арм. ССР. Изд.АН Арм ССР. Е. 1986, с. 221.
25. ПРОБЛЕМЫ ТУРИЗМОВЕДЕНИЯ. Сборник материалов Второй Южно-Российской научно-практической конференции студентов, Аспирантов и молодых ученых по туризмоведению. Ростов-на-Дону, 2013
26. Бабкин А. В. Специальные виды туризма. Учебное пособие. Ростов-на-Дону 2008.
27. Мальцев К. А. Морфометрический анализ рельефа республики Татарстан средствами ГИС-технологий. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата географических наук. Казань – 2006.
28. ТУРИЗМ И РЕКРЕАЦИЯ: фундаментальные И прикладные исследования ТРУДЫ V МЕЖДУНАРОДНОЙ НАУЧНО-П РАКТИЧЕСКОЙ КОНФЕРЕНЦИИ И Под общей редакцией доктора географических наук, профессора В.И. Кружалина МГУ имени М.В. Ломоносова Географический факультет Москва, 28-29 апреля 2009 г. Москва. Диалог культур, 2009.
29. Մարտիրոսյան Լ.Մ. Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. Ե. 2000թ. 139 էջ:
30. Պողոսյան Դ.Ա., Խոյեցյան Ա.Վ., Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները: ԵՊՀ հրատ. Ե. 2008թ. 232 էջ:
31. Թադևոսյան Գ.Պ. Լոռու գրասաշրջային ռեսուրսները, «ՄԻՄ տպագրատուն», Վանաձոր, 2015, 256 էջ

## ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մեր կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների արդյունքում, առաջին անգամ կազմվել է Հյուսիսային Հայաստանի բարձրաչափական գոտիների խոշորամասշտաբ քարտեզ (Մ 1:100 000), որի վրա առանձնացված են ոչ միայն բարձրաչափական գոտիները, այլև տրված են գնահատման արդյունքում այդ գոտիների ռեկրեացիոն կատեգորիաները: Կարևոր նորույթ է նաև բարձրաչափական նոր սանդղակի կիրառումը, որը մինչ այդ չի կատարվել նման հետազոտությունների համար:

Հյուսիսային Հայաստանի ռելիեֆը, մասնավորապես բարձրաչափական գոտիները բարենպաստ են ռեկրեացիայի և զբոսաշրջության համար: Ռելիեֆի առանձին տարրերը, ինչպես նաև տարբեր հիպսոմետրիկ գոտիներում գտնվող լեռնային ապարները հանդիսանում են ռեկրեացիայի և զբոսաշրջության կարևոր ռեսուրս:

Հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է ասել, որ Հյուսիսային Հայաստանի տարածքի գերակշիռ մասը ընկած է միջին և բարձրլեռնային գոտիներում, ինչը նպաստավոր է լեռնային ռեկրեացիայի և զբոսաշրջության որոշակի տեսակների զարգացման համար: Հյուսիսային Հայաստանի ռելիեֆի բարձրաչափական գոտիներից առավել մեծ ռեկրեացիոն հնարավորություններ ունեն միջին բարձրություններում ընկած գոտիները (1500-2000մ), քանի որ դրանք առավել խիտ բնակեցված և առավել բարենպաստ բնական պայմաններ ունեցող տարածքներն են:

Ընդհանուր առմամբ հետազոտվող տարածքի ավելի քան 38%-ը դասվում է ռեկրեացիոն I կատեգորիայի մեջ, որը բնութագրվում է որպես շատ բարենպաստ: Հետազոտական աշխատանքների արդյունքում ակնհայտ է դարձել, որ IV կարգի տարածքները, որոնք պիտանի չեն ռեկրեացիայի համար, զբաղեցնում են Հյուսիսային Հայաստանի ցածրադիր մասը՝ տարածվելով Տավուշի մարզի ծայր հյուսիսային հատվածում, Դեբեդի ստորին հոսանքում: Նման տարածքները զբաղեցնելով ընդամենը 14կմ<sup>2</sup>, որը կազմում է հետազոտվող տարածքի 0,3%:

Հետազոտությունների հիման վրա կարելի է ասել, որ ռեկրեացիան և զբոսաշրջությունը տնտեսության այն ճյուղերից են, որոնք կարող են զբաղեցնել բարձրաչափական գոտիների «վերին հարկերը», որտեղ գյուղատնտեսական



գործունեությունը անհնար է, ինչը լավ հնարավորություն է բարձրադիր գոտիներում ապրող բնակչությանը լրացուցիչ եկամուտների ստացման համար:

Քանի որ, լեռնային ռեկրեացիան հանդիսանում է տնտեսության ծախսատար ճյուղերից մեկը, նախքան ռեկրեացիոն օբյեկտների շինարարությունը, անհրաժեշտ է բարձրաչափական գոտիների մասնագիտական և համակողմանի ուսումնասիրություն: Նպատակահարմար է «գրոսաշրջային հարահոսի» կազմակերպում, որը թույլ կտա լիարժեքորեն օգտագործել բարձրաչափական բոլոր գոտիների ռեկրեացիոն հնարավորություններն ըստ սեզոնների:


Կատարված հետազոտական աշխատանքները ամփոփվել են գիտական հոդվածում, որը հանձնվել է Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագրին Երկրաբանական և աշխարհագրական գիտությունների սերիայում հրապարակման համար:

Կից ներկայացնում եմ համապատասխան տեղեկանք:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

h/h	Անվանումը	Ֆինանսավորման ծավալը (ՀՀ դրամ)
1	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը	900 000
2	Այլ ծախսեր, այդ թվում՝	-
	սարքեր և նյութեր	-
	գործուղումներ	-
Ընդամենը՝		900 000

Թեմայի ղեկավար՝

  
(ստորագրություն)

Մարտիրոսյան Լ. Մ.  
(Ա.Ա.Հ.)

ՇՊՀ գլխավոր հաշվապահ՝

  
(ստորագրություն)

Ռաֆֆի Քալաջյան  
(Ա.Ա.Հ.)

«31» մայիսի 2017 թ.



ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱՅԻ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Աշխատանքի վարձատրության հողվածով 900 000 ՀՀ դրամը՝ ներառյալ եկամտային հարկը, ստացվել են թեմայում ընդգրկված աշխատակիցների կողմից՝ ըստ իրենց հաստիքային աշխատավարձերի:
2. Սարքեր և նյութեր՝ 0 դրամ:
3. Գործուղումներ՝ 0 դրամ:

Թեմայի ղեկավար՝

  
ստորագրություն

«31» մայիսի 2017 թ.